

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Օտարաբարբաբեր գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Менк“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Դպրի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն չեզոքով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Չինականութիւն: — Ներքին տեսութիւն: Բանի մի զիտողութիւններ: Ներքին լուրեր: Մշակութիւն հեռագիրներ: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց: Բանաւ սիրակաւ: Բակի արարող:

ԶԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կայ մի ազգութիւն, մի ազգութիւն ազգութիւն աշխարհիս երեւին, չինացիները, որոնց պատմական զարգացումը շատ օտարոտի է եղել: Այդ ազգութիւնը իր ամբողջ պատմական ընթացքում սահմանափակված էր մնացել, յաճախութեամբ աշխատել է չը յաճախցել դրսի աշխարհի հետ, չը յայտնվել օտար երկիրներին և չը թող տալ օտար երկիրներին էլ թափանցել իր երկրի ներսը...

Այսպիսով Չինաստանը մնացել է միշտ անշարժ, նրա արժանաւորութիւնները դարերի ընթացքում մնացին անյայտ ուրիշ երկիրներին, իսկ նրա պակասութիւնները մնացին անուղղելի,

որովհետեւ չին եւթարկում դրսի աշխարհի թարմ հոսանքի, նրա առաջադէմ ոյժի ուղղիչ ներգործութեանը...

Այնուհետեւ մի ազգութեան յատկութիւնը՝ սահմանափակվել իր նեղ, ներքին, ազգային, աւանդական կեանքի մէջ, առանց դրսի աշխարհի հետ յարակցել ուղենալու, առանց դրսի աշխարհից նոր լոյս ընդունել ուղենալու, — անուանում է չինականութիւն:

Այդ յատկութիւնը ունեցող ազգութիւնը պատրաստ է փոխել, կորչել, ոչնչանալ իր անշարժութեան, իր գերեզմանական մեռելութեան մէջ, — միայն թէ չընդունի դրսից մի որ և է զարկ, որ կարող էր խախտել իր սուրբ անշարժութեան աւանդական, մեռելային ներդաշնակութիւնը...

Գուցէ ոչ մի ազգի մէջ ազգի առաջնորդները, ազգին նոր միտքեր, նոր գաղափարներ յայտնողները, նոր վարդապետութիւն բարոյողները, ինչքան էլ թւով սակաւ լինէին նրանք, չը կրեցին այնքան անարդանք, այնքան հայցո-

յանք, այնքան հալածանք, — որքան հայերի մէջ:

Գուցէ ոչ մի ազգի մէջ բրիտոնեւթեան քարոզողները այնքան չը տանջվեցան, չը չարչարվեցան, որքան Հայաստանում, ազգին նուիրված, ազգին ամենահաւատարիմ քաղաքագէտները, պետական և զինուորական մարդիկ գուցէ ոչ մի ազգի մէջ այնքան չը հալածվեցան և չը մեղադրվեցան այլ և այլ ամենահեշտաւոր յանցանքների և դաւաճանութեան մէջ, որքան հայոց պատմութեան մէջ հայ պետական և զինուորական ամենահաւատարիմ մարդիկ հալածվեցան և մեղադրվեցան նոյն իսկ իրանց հայրենակիցներին, իր մայրենի լեզու մշակողներին, որքան հայերը հալածեցին իրանց գրական ամենաբերեկի գործողներին, իրանց մայրենի լեզու մշակողներին և վերանորոգիչներին...

Հայը մի անգիտակցական անգիտելի ատելութիւն ունի դէպի

ամեն տեսակ վերանորոգութիւն, դէպի իր ազգային անշարժութեան մեռել չինքի ներդաշնակութեան քանդողները...

Հայը հալածում է և մեծ և փոքր գործողներ, — բաւական է որ այդ գործողը մի որ և է նոր ձև մտցնի նրա լեզուի, ընտանեկան շրջանի, գրականութեան, կամ հասարակական կեանքի մէջ: Հայը հալածում էր և Սոփեսա Խորենացուն և Նազարեանցին, և Վազար Փարպեցուն և Նալբանդեանցին... մի և նոյն է ի՞նչ դարում էր ապրում նա...

Հայոց ազգային հանճարը պահանջում է անշարժութիւն, մեռելութիւն, չինականութիւն, նա վիժում է զոռանքով և ատելութեամբ իր շրջանի մէջ յայտնվող նորոգիչներին:

Հայը կամենում է անվերջ մնալ իր ներքին, անշարժ, մեռել չինական ազգային կեանքի մէջ, նա ատում է երբ իր քնած դրութեան մէջ դրսի զարկեր են տրվում նրան...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ

(Երկրորդ մասը)

Ա.

Անցել էր մօտաւորապէս մէկ տարի այն օրից, երբ Միքայէլը ճանապարհ ընկաւ դէպի Մոսկովա:

Վերադառնալիս օր էր: Մոսկովայի խուլ և յետ ընկած փողոցներից մէկում, հին տան մէջ, ուր վարձով տալիս էին գահաւորած սենեակներ, մի պատանի, մաշված և գունաթափ դէմքով, գրասեղանի հանդէպ նստած, աշխատում էր: Նա, երեկ, դեռ լուսացված չէր, թէ ինչ օրից բաւական անցել էր, և դեռ չը յանձնարար իր մաշված թափուկ էին նրա մերկ պարանոցի վրա: Նա խալաթի տեղ հագած ունէր իր ձմեռվայ հին պալտոն և հողաթափների տեղ կրում էր իր կաշույնը: Օրը մարախալապտ էր և սաստիկ ցուրտ: Ճապին թեփուկները քամուց մղվելով, զարկում էին սենեակի սառած ապակիներին և փուր, աննրդաշնակ ձայներ էին հանում: Սենեակը վառած չէր, բայց պատանին, երեկ, ցրտութիւն չէր ըզգում և եռանդով գրում էր: Երբեմն նա վառում էր իր փոքրիկ չիբուխը, և կարծես, նշա ծխովը աշխատում էր ջերմանել իր սառած անդամները: Գրասեղանի վրա, որ բաւական ընդարձակ էր, անկարգ կերպով ածած էին զանազան թղթեր, տետրակներ, զրբեր, լրագրի համարներ, որոնց մէկի վրա դրած էր մի բռան չափ ծխախոտ: Բայց դրանցից նրանց հետ խառն կարելի էր տեսնել փոքրիկ սրտակներ զանազան մեծութեամբ, որոնց մէջ ածած էին գոյնզգոյն փոշիներ և հեղուկ-

ներ, այլ և մի քանի քիմիական և ֆիզիքական գործիքներ, ածուխի մեծ-մեծ կտորներ, որոնցով, երեկ, նա փորձեր էր անում, և մի մարդկային կառաւի:

— Այդ բոլորը իր խառնափնթորութեամբ նմանութիւն էր տալիս ֆաուստի գրասեղանին: Սենեակը բոլորովին մերկ էր. մի քանի աթոռներ, մի մահճակալ, մի լամպ, զրբեր, աստիճանակ, — ահա նրա բոլոր կարասիքը: Այստեղ ապրում էր Բ... գաւառի առաջին հարուստի որդին, մի աղքատ ուսանող: — Ստեփան Մարտիանը:

Գուռը դարկեցին, ներս մտաւ աղախինը:

— Մի պարոն հարցնում է ձեզ:

— Թող մնայ, ասաց պատանին՝ անփոյթ կերպով և շարունակեց իր պարապմունքը:

Ներս մտաւ մի ուրիշ պատանի, բաւական ճաշակով հագնված, և տեսնելով ուսանողին, աղչաւ և կանգնած մնաց: Ուսանողը, գլուխը վեր բարձրացնելով, ոչ սակաւ զարմացմամբ սկսեց նայել եկողին վրա:

— Ախ, այդ դուն ես, Միքայէլ, ինչպէս փոխվել ես, հաղիւ ճանաչեցի, կոչեց նա և գրկեց եկողին:

Միքայէլը մի բառ անգամ խօսել չը կարողացաւ:

— Որտեղից որտեղ... դու, Մոսկովայում... ինչպէս յայտնվեցար այստեղ, հարցրուց ուսանողը, չը թողնելով նրան իր գրկից:

— Գէ, հիմալ նստեմք, պատմիր:

Նստեցին միմեանց հանդէպ: Միքայէլը պատմեց, թէ ինչը որպէս օգնական ուղարկված էր նրա հօր գործակալատարի մօտ, որը տկարութեան պատճառով մննակ չէր կարողանում կատարել գործերը: Մօտակարայէն մի տարի կը լինի, որ ինքը գտնվում է Մոսկովայում և այդ միջոցում միշտ ցանկացել է տեսնել Ստեփանին, բայց չէ կարողացել, որովհետեւ աղան սաստիկ հրաման էր գրել գործակալատարին, որ ամեն կերպով արգիլէ Միքայէլի յարաբերութիւնները իր որդու հետ, որ որդին մի գուցէ փչացնէ և ինչպէս հանձն իր ծառայողին: Բայց գործակալատարը քանի օր առաջ

մեռաւ և նրան թողել տալուց յետոյ իսկոյն վաղեց Ստեփանի մօտ:

— Հատ Վատ մարդ էր, աւելացրուց Միքայէլը, մի րոպէ ես աչքից չէր հեռացնում ինձ:

— Ես չեմ ճանաչում այդ անպիտանին, պատասխանեց Ստեփանը արհամարհական կերպով: — դու ան ասա, հիմա ինչ ես չինում այստեղ:

Միքայէլը յայտնեց, թէ ինչը այժմ կատարում է մոտենող գործակալատարի պաշտօնը. թէ նա իր կենդանութեան ժամանակ գրել էր աղային, որ ես կարող եմ կառավարել նրան յանձնված գործերը և արձակուրդ էր խնդրել, որ աղան թող տայ նրան ժամանակաւորապէս վերադառնալ իր տունը առողջութիւնը ուղղելու համար, որովհետեւ Մօսկովայի օդը ջնասում էր նրան, բայց աղան թող չը տուէր և այնքան տանջվեցաւ, մինչև մեռաւ:

— Այս բոլոր փոփոխութիւնների մէջ այդքանը միայն լաւ է, խօսեց Ստեփանը, որ դու այստեղ կը մնաս և ես առիթ կունենամ կրկին քեզ հետ պարապելու: Գու խօ չես թողել կարդալու օտեր:

— Զէ, Ստեփան, ասաց Միքայէլը աշակերտի ամօթխածութեամբ, ես կարդում էի, միշտ կարդում էի այն զրբերը, որ դու ինձ տուեցիր:

Միքայէլը զարմանում էր, որ նա իր հօր, մօր և քրոջերի մասին ոչինչ չէր հարցնում, և իրանց տան դրութիւնով չէր հետաքրքրվում:

— Նամակ տանում ես տնից, հարցրուց նա:

— Ոչ, և չեմ էլ ցանկանում ստանալ, պատասխանեց Ստեփանը սառնութեամբ: — Ինչ կայ, բոլորը նոյնը կը լինի, ինչ որ տեսել եմ: Այսպէս չէ:

— Այսպէս է: Գու էլ չես գրում:

— Զեմ գրում:

Միքայէլին աւելի անհանգստացնում էր Ստեփանի աղքատ կեցութիւնը, որ աչքի էր ընկնում չքաւորութեան բոլոր դառնութեամբ: Բայց դրանից, նա ամենին առողջ չէր երևում: պատանեկութեան առողջ հասակի մէջ ուժաթափվել և մաշվել էր նա, որպէս մի կմախք: Աշխատութիւնը, ծանր, անբնական աշխատութիւնը համա-

րեա սպառել էր նրա մէջ կենսական ամեն զօրութիւն: Սենեակը, որի մէջ ընկնում էր նա, բոլորովին զրկված կրակից և ջերմութիւնից, որ իր խոնաւութեամբ միմեանց գերեզմանի նմանութիւն էր բերում, բաւական էր սպանելու նրա առողջութիւնը: Մարտափելի է լինում ուսանողի դրութիւնը, երբ նա պէտք է սովորէ և պէտք է մի և նոյն ժամանակ պատերազմէ աղքատութեան հետ: Ամենաթանաղակ ժամերը, որ պիտի նուիրված լինէին ընտրած մասնագիտութիւնը ուսումնասիրելու համար, մասամբ զոհվում են կողմնակի պարապմունքների, որ նա ծախսելու փող ունենայ, որ նա քաղցած չը մնայ: Միքայէլին չէին կարող նկատել չը լինել այս բոլորը, և նա խիստ մտերմութեամբ հարցրուց:

— Ի՞նչով ես ապրում:

— Ի՞նչով, քիչ դրո՞ծ կայ, որով կարելի էր ապրել: — դասեր եմ տալիս, թարգմանութիւններ եմ անում, աշխատակցում եմ մի լրագրի:

Միքայէլը այժմ այնքան զարգացած էր, որ կարող էր հասկանալ, թէ իր բարեկամի այս տեսակ երկրորդական պարապմունքները, խլիով նրանից շատ ժամանակ, կը թուլացնէին նրա ուսման ընթացքը, և բայց դրանից, բոլորովին կը խանգարէին նրա առողջութիւնը, եթէ նա չը կազդուէր իրան հանդուրժեալ օրվայ մէջ գտնէ մի երկու ժամ: Այս պատճառով առաջարկեց նրան ընդունել իրանից ամեն ամիս մի դուսար, որ կարող էր ապահովացնել նրա ապրուստը:

— Այդ անկարելի է, պատասխանեց Ստեփանը:

— Ի՞նչու, հարցրեց Միքայէլը զարմանալով:

— Ինձ աւելի փող պէտք չէ: Բայց դրանից, քեզ յայտնի է, որ իմ հայրը չէր կամենայ, եթէ նրա փողերից կը տային որդուն, բայց եթէ այդ բանը ծածուկ կանես դու, երբ նա կը հասկանայ (և անկարելի է, որ չը հասկանայ) այն ժամանակ կը վնասես ըստ սպարեղին:

— Ես իմ փողերից եմ տալու, ես այժմ ուժեղ եմ ստանում, որը ինձ պէտք չէ:

— Փետր պէտք կը լինի:

Եւ նոյն իսկ այդ պատճառով
այն հայր որ ամբողջ բարձր է,
որ ամբողջն է պատկանում, որ
տիրացու է, որ աւանդական հայ
է, որ չինացի—հայ է, այլ մի
ժամանակակից, մտաւորապէս ա-
ռողջ, առաջադէմ, իր ազգըն-
տան սիրող, իր ազգին ճշմարիտ
բարի ցանկացող հայ է,—նա չը
պետք է խնայի անշարժութեան
մէջ մնացած իր ազգին անդադար
բարոյական անխնայ հարուածներ,
զրսի զարկեր տալուց...

Թող հալածեն,—փոյթ է:
Դեռ բացատրելի է, եթէ նե-
րելի է, երբ որ ամբողջ չինա-
կանութեան պաշտող է: Բայց
աններելի է, երբ մի հասարակա-
կան օրդան, մի լրագիր, չինա-
կանութեան բարոյող է լի-
նում...

Հայ ամբողջն ուր զարկ զրսի
բարոյական հարուածներ հասցնե-
լու ընդունակ է միմիայն Եւրո-
պայում, օտար, աւելի բարձր
կուլտուրայի ներդրութեան
տակ կը թուի ստացած հայ
երիտասարդութիւնը:

Ինչպէս հիմնադրող դարում
հայ երիտասարդութիւնը գնում
էր Յունաստան իր կըթուիւնը
ստանալու համար, այնպէս էլ
թող այժմ մեր երիտասարդու-
թիւնը գնայ Եւրոպա, բարոյա-
պէս մկրտվի մի նոր քաղաքակր-
թութեան մէջ: Եւն ժամանակ
երբ այդ տեսակները մեծ թուով

կը վերադառնան իրանց երկիրը,
—զրսի զարկեր և անխնայ հա-
րուածներ չինականութիւնը պաշ-
տողների վրա անպակաս կը լի-
նեն:

Եւն ժամանակ թող կատարեն
մեր չինացիները,—իսկ մենք, եթէ
մինչև այն ժամանակ դեռ կենդա-
նի կը լինենք, մեր ամբողջ սրտից
կուրախանանք և մեր ամբողջ ոյ-
ժից կը ծափահարենք այդ տե-
սարանին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՆԻ ՄԻ ԴԵՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏ ամսագրի 1878 թ. Ապրիլի №
մէջ (ե. 180—188) տպւած է մի հատուած
այսպիսի վերնագրով. «Սրբոց վարդապետաց
հայոց Մովսէսի և Դաւթի հարմուքը ըստ
երկրաբանական»:

Ինքը խմբագրութիւնը, մեծ նշանակութիւն
տալով սոյն գրուածին, յայտնում է, որ սոյն-
պիսի թանգարան հատուածը գտել է Եջմի-
ածինի մի ձեռագրի մէջ, որից հաղորդում է
ի գիտութիւն ազգին և այլն և այլն, կար-
ծելով, թէ մի որ և իցէ մինչև այժմ ազ-
գին անյայտ դորձ է տալի:

Շարունակութիւնը վերջիցս հատուածինը
տպած է նոյն ամսագրի 5-րդ համարի մէջ,
ե. 210—217, իսկ 217—219. ե. ե. զանա-
զան ծանօթութիւններ են պ. Կ. Վ. ցի կող-
մից:

Որովհետև այս առաջին անգամը է, որ
Եջմիածին հոգևոր և ուսումնական գործոց
ղեկավարները տպում են ձեռագրերից—իրեւ-
թէ մինչև այժմ հայ հասարակութեան համար

անյայտ մեր նախնաց կամ նախորդների այն-
պիսի գրաւոր աշխատութիւնները, որոնք վա-
ղուց տպած են և որոնց տպած լինելը ան-
յայտ է նոյն ղեկավարներին, այս պատճառով,
հասարակաց կարծիքը մոլորացնելուց ազատե-
լու համար, աւելորդ չը համարվի յետագայ
տեղեկութիւնները:

Վերջիցս հատուածը և միւս յետագայ
յիշուած գրուածները տես «Իրք ժողովածոյ
ընդդէմ երկրաբանաց, մանաւանդ... ժողովոյն
Քաղեկոնի, արարեալ սրբազանից վարդապե-
տաց»:

Նախ արամբանութիւն Մովսէսի և Դաւ-
թի, ե. 1—272., երկրորդ, թուղթ Մաթու-
սաղայի Սինեաց եպիսկոպոսի զոր գրեաց առ
Հերակ կայսր, ե. 273—300., երրորդ, թուղթ
Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի զոր գրեաց
առ Գերմանոս պատրիարքն Կ. Պօլսի, ե. 301
—375., չորրորդ, թուղթ Պօղոսի Մարոնի,
եպիսկոպոսի զոր առհասարակ երկրաբանական
գրեաց, ե. 376—443, հինգերորդ, թուղթ
միւս Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի, որ
առ Գրիգոր կաթողիկոսն գրեաց, ե. 450—
477. վեցերորդ, զիրք և բանք սրբոյն Գրիգորի
Տաթևացոյն որ առ Լևոնական երեւաց, ե.
481—661. եօթներորդ, Միքայէլի պատրիար-
քի ատորոց, զոր առ հասարակ քաղեկոնա-
կանն գրեաց, ե. 661—659—բոլորը տը-
պուած են, միասին Նոր—Յուդայ (Նազազան
քաղաքին կից) 1688 թ., տ. մեզանից հա-
րիւր իննսուն ու մէկ տարի առաջ թուղթը
16 ծալ:

Bibliographia Caucasica et Transcaucasica
կամ Կովկասեան և Անդրկովկասեան երկիրնե-
րին ու ազգերին վերաբերեալ գրադիտութեան
տպագիր աղբիւրների կանոնադրեալ Յուշակի
Փորձառութիւնը անուանալ զըրի 2-րդ հա-
տորի մէջ (որը դեռ վերջացած չէ. 1 հա-
տորը պարունակում է 1—804 երես) վերջի-
շեալ բովանդակութիւնը տպած է 877—879
եր:

Յոյց տուած բովանդակութիւնից հասա-
րակութիւնը կարող է 1) տեսնել, թէ վերո-
յիշեալ գրուածները որպիսի խորհրդաւոր նը-
շանակութիւն պիտի ունենան մեր և կեղե-

ցականների համար, ոչ թէ միայն իրեւ-
հին հայ գրականութեան և հայ ախանաւոր
հեղինակների գրուած, այլ մասնաւորա-
պէս իրեւ հայոց եկեղեցւոյ պատ-
մութեանը վերաբերեալ նիւթ. 2) հայ
հասարակութիւնը պիտոյ է այս անգամ էլ
(որպէս բազմիցս արդէն պատահել է) համա-
գլխի, որ Եջմիածին գործոց գլխաւոր ղեկա-
վարները, ոչ թէ միայն չունեն փոքր ի շատե-
կանաւոր եւրոպական ընդհանուր ուսում մի
գիմնադիտութիւն չափ, այլ մասնաւորապէս, նը-
րանց վերաբերեալ մասնագիտու-
թեան մէջ էլ, ինչ որ վերաբերում է հայ
եկեղեցական պատմութեան և դաւանութեան
գրուածքներին—այսպիսի գրուածքներից շա-
տերի հետ անծանօթ են և մինչև անգամ
սրանց տպած լինելը չը գիտեն. 3) հայ
հանդիսագրութեան մէջ էլ, մինչև այժմ, ոչ
ոչ չը ցոյց տուեց վերջիցս գրուածների ա-
ռաջին տպագրութիւնը:

1870 թ. Եջմիածին ղեկավարները տպե-
ցին «Միաս վարդապետի Հանդէսը» աղգա-
բանութիւն հայոց վերնագրով զիրք, նոյն-
պէս Եջմիածին մատենադարանի ձեռագրերից
համար, 12 ծալ, ե. 1—144, առանց ցանկի,
այն ինչ մի և նոյն զիրքը, ցանկով, տպած է
նորանից 135 տարի առաջ, տես. 1735 թ.,
Կ. Պօլսի, 12 ծալ, ե. 178 և սոյն տպագրու-
թեան մասին Եջմիածին տպագրողները ոչինչ
տեղեկութիւն չեն ունեցել: Սրա մասին էլ
մեր հանդիսագրութիւնը ոչինչ անհարկու-
թիւն չարեց, մինչև Bibliographia-ի երկիրը
(տես սրա մէջ ե. 466):

Մի և նոյն ժամանակ պիտոյ է գիտնալ
որ Հանդէսը այս գրուածը գիտութեան ա-
ռաջը, ոչինչ նշանակութիւն չունի և սրա
տպագրութիւնը շատ և շատ ապացոյցներից
մինն է, թէ Եջմիածին գործերի կառավա-
րութեան ղեկը որպիսի գիտութեան անտե-
ղեակ և անուս մարդոց ձեռքն է:

1870 թ. Եջմիածին իշխանութիւնը տը-
պեց, նոյնպէս ձեռագրից և իրեւ թէ ա-
ռաջին անգամ «Աբրահամ 3-րդի, կաթողիկոսի
հայոց» գրուածը. «Աբրահամ կաթողիկոսի
Կրեանցը» պատմագրութիւն անցիցս իւրոց և

Միտայելը սկսեց աւելի թախանձել, որ ընդու-
նէ, անպատճառ ընդունէ. աւելացնելով, թէ ինքը
շատ բաներով պարտաւոր է համարում իրան, և
ցանկանում է մի փոքրիկ ծառայութիւն անել իր
բարեկամին, և շատ պիտի տխրի, եթէ իր առաջար-
կութիւնը չընդունվի: Եւ յայտնեց, եթէ Ստեփանը
չէր ուզում ձրի նուէր ընդունել, կարող է մի ժա-
մանակ յետ դարձնել, երբ ուսումը կը վերջացնէ,
երբ ինքը փող կունենայ:

Ստեփանը ուսմանում էր բժշկական մասնում
և համոզւած էր, թէ իրան սպասում է լաւ ա-
պագայ, թէ կարող էր մի օր վերադարձնել իր
ստացած դուստրը: Միւս կողմից, նա տեսնում էր,
որ Միքայէլը բարեբաղնութիւնը բաւական ղեկու-
թիւն կը տար իրան աւելի յաջողակ կերպով շա-
րունակել իր ուսումը, որ պահանջում էր աւելի
ժամանակ և աւելի աշխատութիւն, մինչդեռ
հացի համար եղած երկրորդական պարագայնը-
ները զրկում էին նրան գլխաւոր աշխատութիւն,
նից. Բայց վախենում էր Միքայէլին փորձանք
մէջ գցելուց, մանաւանդ նա ինքը ասաց, թէ ա-
ղան առաջուց գրած էր եղել մեռնող գործակա-
տարին, որ արգելէ ամեն տեսակ յարաբերութիւն
իր որդու և Միքայէլի մէջ:

—Գիտար է, Միքայէլ, շատ դժուար է, ասաց
նա:

—Ոչինչ դժուարութիւն չը կայ, ես իմ ուսման
հետ կարող եմ վարվել որպէս ես կամենում եմ:
—Բանն այն է, որ չես կարող: Միթէ չես ճա-
նաչում իմ հորը. դու այնչեղ սեփականութիւն չու-
նես, քո անձն էլ մինչև անգամ նրան է պատկա-
նում, քանի որ նրա ձեռքի տակն ես գտնվում:

Երկար խօսելուց յետոյ երկու բարեկամները
բաժանվեցան և փողի խնդիրը մնաց անվճիռ:

—Դու դարձեալ կը գաս ինձ մօտ, այնպէս չէ,
ասաց Ստեփանը նրան ճանապարհ դնելու միջո-
ցին:—Ես կը տամ քեզ նոր գրքեր կարդալու հա-
մար:

—Կը գամ և շուտ շուտ կը գամ:
Միքայէլը թէն խոստացաւ իր ուսման տալ

Ստեփանին, թէ և ամենայն սիրով ցանկանում էր
օգնել նրան, բայց մի բան էր մտածում, թէ որ-
քան դժուար էր իրագործել: Նա իր ուսման
չէր ստանում, այլ մնում էր աղայի մօտ անհու-
համար: Որդի, գրում էր նրան Ստեփանին, ուս-
մանում եմ, բայց ինչ անեմ, ինչ պիտի անեմ, կը
խաբէմ, կը փախչեմ, թող մնայ ինձ մօտ, ես կը
պահեմ, և կը շահեցնեմ քեզ համար, և վերջի օրում
մի բաւ թաւն իսկ կը չլինեմ, յետոյ քեզ կը
տամ: Հիմա Միքայէլը ինչ եղանակով կարող էր
հասկանալ աղային, թէ իր ուսման իրան պէտք
էր, թէ կամենում էր ամեն ամիս ստանալ, որով
հետեւ նա ձրի կարօտութիւն չունէր, նրա բո-
լոր ծախսը, թէ ուսման, թէ հանգիստի թէ կացա-
րանի համար ստացվում էր Ստեփանին առեւտրա-
կան անկից, որի մասին նշանակւած էր մի որոշ
դուստր:

Արեւելքում վաճառականը և վաճառականու-
թիւնը մէջ ունեցել են հասարակութեան աշխու-
ղատանքը նշանակութիւն: Արեւելեան վեպերի և
առասպելների մէջ վաճառականի անունները հա-
մարեա խալիֆաների անունների չափ յարգելի
տեղ են բռնել, որպէս առաջնութեան և արդա-
րութեան օրինակներ: Եւ հայերը, որպէս ասիական
վաճառականներ, պէտք է անմասն չը լինեն այն
ազնիւ յատկութիւններից, որ ունեցել են իրանց
հետ յարաբերութիւն ունեցող միւս ազգերն, որ-
պիսինքն եղել են պարսիկները, ասորեստանցիք և
մանաւանդ արաբները:

Եւ իրաւ, հայ վաճառականների մէջ ևս դեռ մնա-
ցել են մի քանի գեղեցիկ սովորութիւններ, որոնք
տակաւն չեն կորցրել իրանց նահապետական
ձևեր: Գրանցի մէջն է վաճառականի մօտ ծառա-
յող գործակատարի որդի գրութիւնը: Տես-
նում ես, մի տղայ, շատ անգամ ստոր, աղքատ
ընտանիքից, շատ անգամ բոլորովին որբ, մտնում
է վաճառականի մօտ. բաւական է, որ նրա աղան
նկատէ, թէ տղան չնորք ունի, ընդունակ է առաջ
գնալու, սկսում է այնուհետեւ նրա վրա առանձին
խնամք տանել: Թէ և նշանակում է ուսման, բայց

փողը նրա ձեռքը չէ տալիս, պահում է իր մօտ,
շահեցնում է, մինչև գործակատարը առևտուրի
մէջ աւելի վարձվելով, զարգանում է, և այնուհե-
տե իր աղայի օգնութեամբ իր համար առանձին
վաճառականութիւն է սկսում: Աղան միանգամով
վճարում է նրա շատ տարիների ուսմանը, որ իր
առևտուրի մէջ շահեցրել էր, և իրեւ վարձ նրա
հաւատարմութեան, իրանից էլ մի բան
աւելացնում է, և նա ունենում է մի գրամագրութիւն,
որով կարող էր իր սկսած գործը շարունակել:
Նա ստանում է և կրեղիտ իր բարեբաղնից, որով
հետզհետե ընդարձակում է իր վաճառականութիւն-
ը: Այս տեսակ գործակատարները համարվում են
աղայի որդիները: Աղան իր համար փառք և
պատիւ է համարում, որ կարողացաւ հասցնել մի
մարդ: Այդ մարդը կոչվում է աղայի շէքը, որ
—այսինքն մի ճրագ, որ վառեց աղան մի աղքատ
ընտանիքի սև օրին լոյս տալու համար: Եւ ամեն
մի աղա այնքան աւելի յարգելի է լինում իր հա-
սարակութեան մէջ, որքան շատ թուով հասցնում
է շէքաւորները:

Բայց Մատիսեանը աւելի գործնական կէտից էր
նայում յիշեալ սովորութեան վրա: Նա էլ իր գոր-
ծակատարների ուսմանը, կամ ամբողջապէս և կամ
մի մասը, իր մօտ էր պահում, խոտանալով շա-
հեցնել և վերջը հնար տալ նրանց առանձին առե-
տուր սկսելու: Իսկ այս մի խորամանկ միջոց էր
գործակատարին միշտ կապւած պահելու իր հետ
կամ միշտ նրա սանձը իր ձեռքում պահելու հա-
մար: Ուսմանը իր մօտ պահելով, Մատիսեանը միշտ
ունէր իր ձեռքում մի գրական, մի երաշխաւո-
րութիւն գործակատարի կողմից, որ ստիպեցնում
էր նրան անապայման հնազանդ լինել Որդեհետե մի
անհաւատարմութիւն նկատածին պէս, աղան կա-
րող էր իսկոյն նրան զուր անել, և ուղարկել
գործակատարի ամբողջ տարիների ծառայութեան
վարձը վեր առնել որպէս տուգանք: Եւ շատ ան-
գամ բոլորովին անմղմ մի գործակատարի մեղա-
դրում էր նա անհաւատարմութեան մէջ և կտրում
էր ուսմանը: Եւ գրանով պէտք է բացատրել Մա-

միտիսեանի առեւտրական տան գործակատարների
անդադար փոփոխութիւնը:

Վերադառնալով Ստեփանի մօտից, Միքայէլը
հենց այն օրը գրեց աղային, ինչպիսիք, որ իրան
թող այս ամէն ամիս վեր առնել իր ուսմանը,
պատճառ բերելով, թէ նպատակ ունի գնել վի-
ճակախաղի տոմսակներ և իր բախտը փորձել
այդ բանի մէջ: Նա ստացաւ մեծօրդական պա-
տախտ, աղան յայտնում էր, թէ դա «սարսա
ղութիւն» է, թէ ինչն է նրա բախտը, թէ ամեն
բան իրանից պէտք է սպասէ, և խորհուրդ էր
տալ իր խրատներին հետեւել, որ վերջը կարո-
ղանայ օրինաւոր մարդ դառնալ: Այս պատաս-
խանք ստանալով զայրացուց Միքայէլին, և պատրաստ
էր յայտնել աղային, թէ բոլորովին կը թողնէ
իր գործակատարութիւնը, եթէ աղան չը յօժարվի
ընդունելու նրա խնդիրը: Բայց նա չը գրեց: Թէ և
Միքայէլը վերջին ժամանակներում բոլորովին ճա-
նաչել էր Մատիսեանի հոգին, թէ և ամենակն չէր
հաւատում նրա խոստումներին, այնուամենայնիւ
նրանից հեռանալ ևս չէր կարող, ոչ այն պատ-
ճառով, որ գուցէ կը զրկվէր աղայի մօտ ունեցած
իր փողերից, ոչ, բայց կար մի առանձին պատճառ, որ
կատար էր նրան որպէս Մատիսեանի ընտանիքի,
նոյնպէս և նրա գործերի հետ: Միքայէլը դեռ ևս
չէր մոռացել ծաղիկների այն փունջը, որ ձգեցին
նրա ստակի մէջ, երբ նա հեռանում էր Մատի-
սեանի տնից...

(Կը շարունակվի)

Յ Ա Յ Տ Ա Ղ Դ Ր Ի Մ Ա Ր Ե Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մամուլի տակից ղուրս եկան և վաճառվում են 4 եւ տրօնական Գրավաճառան օգուտ հեռեայ հայերէն գրքերը:

- | | | |
|----|--|---------|
| 1. | Մայրենի լեզու Ա. Տ. Ե. օթներորդ տպագրութիւն, աշխատասիրութիւն | — 35 կ. |
| 2. | Բէքէր բիձու հանաքը, օպերետ մի զործողութեամբ, աշխ. | — 15 կ. |
| 3. | Վ. Դ. Ե. իմ վէճէր, Ֆարս երեք պատկերով, հեղինակութիւն Տէր | — 50 կ. |
| 4. | Սեփական երեսու մոտով մէկ, արարածով, թարգ. Նահրուդանց | — 25 կ. |

Մայրենի լեզուն գումարով գնողներին նշանաւոր զիջումն է լինում:

Նոյնտեղը վաճառվում է հանդ. Ս ա ե փ ա ն ն ո ս Ն ա զ ար ե ա ն ց ի վիմախալ պատկերը պ. Նահապետիկ հայերեն և ռուսերեն ուղերձով. իւրաքանչիւր օրինակի զինն է մէկ րուբլի: Վաճառումից զոյացած դրամը պիտի դորձ դնուի հանգուցելու յիշատակին մէկ կիսաքճան կանգնեցնելու: Յոյս ունենը որ մեր Թիֆլիսաբնակ և զաւտաւրնակ աղգայինը չենք բաւականանալ լոկ և Թաժան ցոյցերով միայն կատարել հանգուցելու հոգեհանդիսը, այլ կը շտապեն ձեռք բերել նորա կենդանազիրը, որով և կը նպաստեն մի համեստ յիշատակ կանգնեցնելու մէ ճ հ ր ա յ ար ա կ ա ո ս ո ի անուամբ: Այս դործի սկզբնաւորութիւնը պատկանում է Մոսկիայի հայոց եկեղեցու երեցիոխան պ. Մեղքոն Գասպարեան Փաննանցին՝ որից ստացում են այդ պատկերները:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

	Քաղաքացիական, Գյուղական, Հասարակական գործերը.	Բ.	Կ.
Օր. Տէր-Մարկոսեանց՝ Թաւաժաղ Մեղոնէ պատկերազ.	.	—	40
Բժ. Տիգրանեան՝ Մարմնական գիտական բառարան.	.	1	—
Բժ. Բարաթեան՝ Ուսումնական բանի տնտես.	.	1	—
Արուսեանեան՝ Թորոս Աղբարմա.	.	1	25
—	Մանանայ.	1	75
—	Շուշան Շաւարշանայ.	—	50
Խրիմեան՝ Հրաւիրակ Արարատեան.	.	1	25
—	Սիրաքէ Սամուէլ.	1	45
—	Յիսուսի վերջին շաբաթ.	—	70
—	Մարգարիտ Աղբարմա.	—	75
—	Դրախտի ընտանիք.	1	25
—	Վանդոյ.	—	20
Պէշքէթեան՝ Մատենագրութիւնք.	.	2	75
Սոսանեան՝ Մէթոքին վերայ.	.	—	75
Դուրեան՝ Տաղքէ թատերերգութիւնք.	.	1	75
Սլիթունեան՝ Տեղիկ. Հայոց գաղթականութեան.	.	1	20
Սերենց՝ Թորոս Լեոնի.	.	1	—
Հայրաճեան՝ Նոր երգարան.	.	—	75
Ձերաղ՝ Գրական փորձեր.	.	1	—
—	Աղգային դաստիարակութիւն.	1	—
—	Հայաստանի Խալիլի երկի տիպ.	—	60
—	Թէմնիշ շահեղանք Բերլի. փնտ.	—	40

Երևանյան հրապարակի վրա ԹԱՄՍՄԵՇՆՎԻ կարավանաբայի դեմոստր Ձ 11. տան վերի յարկում վարձով տրվում է մէկ ԳԱՀԼԻՃ ծառայով, լաւ կարասիքով և առաւօտահիւսիկ սամովարով. դահլիճը մի բալկօն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 ռուբլ: Բացի դահլիճը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆՏԱԿԵՆՈ՛ կարասիքով ծառայով, սամովարով և լուսաւորութիւնով. այդ սենեակները ամսական արժեն 25, 20 և 15 ռուբլ: Սյր սենեակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան մէջ Կարդանանցին:

Յունիսի 17-ին Արծրունու թատրոնում բաբե-
գործական հապտաօրով տևած հերկայացումից դո-
սադա 294 ռ. գումար. ստմանկեր ծախկեցա
226 ռ. 70 կ., իսկ ընդհանուր մուտքի մնացած
մասը, այսինքն 67 ռ. 30 կ., գնաազան անծերի
հաղարեղութիւնն է կազմում: Ծախսերի բոլոր գու-
մարը կազմում է 139 ռ. գուտ գումար մնումէ
155 ռ., որը յանձնակցաւ պ. Փուրկինեանցին հա-
ցնելու ըստ պատկանելոյն: Մեր սրբազան պարոա-
նաւթիւնն ենք համարում՝ մեր անկեղծ շնորհա-
կարութիւնը յայտնել այն անձանց, որոնք իրանց
հերկայութեամբ պատուեցին մեր հերկայացումն:

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ» ԱՄՍԱԳՐԻ

$\frac{1}{\sqrt{\pi}} \int_0^{\infty} \cos(xt) dx = \delta(t)$

«Մանկավարժական Թերթը» իւր երկրորդ տարուայ շրջանում հրատարակելու է նոյն ուղղութեամբ և ծրագրով, ինչպէս որ առաջին շրջանում՝ հետեւեալ պայմաններով:

1. Տարեկան կը լինի 10 զբոյժի, իւրաքանչիւրը 6 թերթից (96 երես):
2. Տարեկան գինն է ամենայն տեղ 6 ուս:
3. Անչէն սեպտեմբերի 10-ն բաժանորդագիրը մշարող բաժանորդը կը ստանայ ձրի ցուխի ամսի վերջին մի քնտրի Հեղինակութիւն Հայերէն լեզուով թարգմանութեամբ կամ ինքնուրոյն ընթերցանութեան համար:
4. Եթէ բաժանորդաց թիւը Հասնի մինչեւ 480-ի, այն ժամանակ խմբագրութիւնս իւր բաժանորդներին ձրի տալու է երկու գիրք:
5. Ուսուցիչները կարող են բաժանորդագիրը մշարել երկու նուագ առաջին երեք րոպէն յուլիսի սկզբին. միւս երեք րոպէն նոյեմբերի մինչև 6-ն: Վերջին նուագի բաժանորդագիրը ուշանալիս թերթը չի ուղարկվում նոյեմբերի զբոյժից սկսած մինչև դրան տեսնալը:
6. Որ և իցէ զբոյժի չը ստանալու մասին բողոք հարկաւոր է ուղարկել ուղղակի խմբագրութեան հետեւեալ Ձեռն ստանալուն պէս:
- Բաժանորդ զուրիլ ցանկացողները կարող են դիմել խմբագրութեան գրասենեակը, որ գտնվում է պ. Յ. Մարտիրոսեանի տպարանում Օրենքան փողոցի վերայ, Ալէքսանդրեան պարտէի մօտ:

Օտարաբաղադրացիք կարող են դիմել հե-
տևեալ հասցեով. В контору Редакции
Армянского Журнала „Педагогический
Листок“.

Խմբագիր ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ:

Խնդրում եմ ՎԱՐՍՍԱՆԻ եւ ԻՄԵՐԵՏԻ ԹԵ-
ՄԻ Հայոց Հոգեւոր աւստմնարանների ՎԱՐՁՈՒ-
ԹԻԻՆ ՆԵՒԻՆ Հաղորդել ինձ ԹՀ ինչ առարկա-
ների ՈՒՍՈՒՑՁԻ ԿԱՐՑՈՒԹԻՒՆ ունենչ ուղար-
կելով մի և նոյն Ժամանակ իրանց յանձնված
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՇՏԱՏԶ:

Թեմական Վերատեսուչ

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ:

4-10

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

L.

Տարրական Ուսուցիչական

Սշակերտների և աշակերտողինների ընդունելությունը և քննությունները կը սկսվեն օգոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 3-ին 1879 թ.:

Մասնական Պարտեզում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը:

Ուսման ընթացքը այնպես է յարմարեց-
րաճ, որ ուսումնարանում թէ՛ աղջիկ և թէ՛
տղայ աւարտողները կարող են զիննազդիանե-
րի 1 և 2-րորդ դասատուները մտնել:

Սօլօլակի, Վելիամինովսկայա փողոց, Իշխ.
Ամատունու տուն, № 11.

Մարիամեանց ովնանեան օրիորդաց ուսումնարանում ուսումը սկսվում է սեպտեմբերի 3-ին, աշակերտուհիները սկսած է օգոստոսի 20-ից։ Այս տարի բացվում է երրորդ դասատուն, որով ընդ ամենը կը լինեն երեք դասատուն և չորս ապօրտառու կադատուհի։

Յանկայեղները ծառայել ՈւՍՈՒՅԶԱԿԱՆ ՊԱՇ-
ՏՈՆՈՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՏԻ ԹԵՄԻ ԱԶ-
ԳԱՅԻՆ Հոգևոր դպրոցներում հրաբիր-
վում են ՅԱՅՏԵՆԻ Խրանց ջանկեր-ԹԻՒՆՆԵՆ
Ստար քաղաքացիը ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻԿԵ ԻՆՃ
Նամակով:

Թեմական Վերադարձութեամբ

ԳԻՈՐԳ. ԲԱՐՍԻՈՒԴԱՐԵԱՆՑ:

4-10

ՕԳՈՍՏՈՍԻ 29

Տ Ե Ղ Ե Կ Ա Յ Ո Յ Ց

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օրոտոսի 28-ին)		Բ.	Կ.	ՀԵՌԱԳԻՐ	ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ	Փ Օ Ս Ց	ԲԺՇԿԱՆՈՑ	ՔՄՇԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ																																								
Ոսկին (պուլիսներով)		7	98		<table><tr><th colspan="2">Բ. Կ.</th></tr><tr><td>Կովկասի և Անդրկովկասի քարաքիլները</td><td>1</td></tr><tr><td>Ռուսաստան</td><td>2</td></tr><tr><td>Առաքիլա</td><td>3</td></tr><tr><td>Անգլիա</td><td>4</td></tr><tr><td>Գերմանիա</td><td>2</td></tr><tr><td>Ֆրանսիա</td><td>3</td></tr></table>	Բ. Կ.		Կովկասի և Անդրկովկասի քարաքիլները	1	Ռուսաստան	2	Առաքիլա	3	Անգլիա	4	Գերմանիա	2	Ֆրանսիա	3	<table><tr><th>առա- ւօտ:</th><th>երեկո- յեան.</th></tr><tr><td>Թիֆլիսի</td><td>9. 21</td></tr><tr><td>Գորբ</td><td>11. 58</td></tr><tr><td>Միխայիլով</td><td>1. 29</td></tr><tr><td>Ռիսն</td><td>6. 47</td></tr><tr><td>Փոթի</td><td>9. 40</td></tr></table>	առա- ւօտ:	երեկո- յեան.	Թիֆլիսի	9. 21	Գորբ	11. 58	Միխայիլով	1. 29	Ռիսն	6. 47	Փոթի	9. 40	<table><tr><th>առա- ւօտ:</th><th>երեկո- յեան.</th></tr><tr><td>Փոթիից</td><td>9. 13</td></tr><tr><td>Ռիսն</td><td>12. 13</td></tr><tr><td>Միխայիլով</td><td>5. 39</td></tr><tr><td>Գորբ</td><td>7. 5</td></tr><tr><td>Թիֆլիս</td><td>9. 31</td></tr></table>	առա- ւօտ:	երեկո- յեան.	Փոթիից	9. 13	Ռիսն	12. 13	Միխայիլով	5. 39	Գորբ	7. 5	Թիֆլիս	9. 31	Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագրիներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը նախարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 8-ից մինչև 10 ժամ:	— —ԴԱՐԱԶԻԶԱԴ... Եանց. Ձեր միաս բարեաւը Դարաշէնպիւն Հետաքրքիր չէ: —ՆԵՐՆԱՆ. Ար. Ձեր գրուածքը վկայատուութիւն չէ: Դա երեխայական մի անկապ պատմութիւն չէ: Ձերը տպի: —ԱՍԻԱՔԱՍԱՐ. Գ. Ն. Օրերուն ուղարկեցինք ձեզ մի նամակ, որ ձեր Հասցեով ըստացվեցաւ խմբագրատանը: —ԹԻՖԼԻՍ. Մ. Վ. Ս. Ձեր երկրորդ նամակի տպագրութիւնը նիւթերի շատութեան պատճառով ուշացաւ: Օրերուն միս կը տպինք: Ձեզ վրա բարձած մեղադրանքները խմբագրութենից չէին, այլ մասնաւոր մարդիկներէր: Դուք կարող էիք անբաւական լինել միայն այն ժամանակ, եթէ ձեր պատասխանը չը տպէինք: Այդ գործի մէջ մեզը չէզոք ենք:
Բ. Կ.																																																
Կովկասի և Անդրկովկասի քարաքիլները	1																																															
Ռուսաստան	2																																															
Առաքիլա	3																																															
Անգլիա	4																																															
Գերմանիա	2																																															
Ֆրանսիա	3																																															
առա- ւօտ:	երեկո- յեան.																																															
Թիֆլիսի	9. 21																																															
Գորբ	11. 58																																															
Միխայիլով	1. 29																																															
Ռիսն	6. 47																																															
Փոթի	9. 40																																															
առա- ւօտ:	երեկո- յեան.																																															
Փոթիից	9. 13																																															
Ռիսն	12. 13																																															
Միխայիլով	5. 39																																															
Գորբ	7. 5																																															
Թիֆլիս	9. 31																																															
Վերջինի 5% առաջի փոխառությունն ունի. 100 »		238	—																																													
Երկրորդ 5% վերջինի »		237	—																																													
Մարտի կուրսը 269—		100	—																																													
Լճագետի կուրսը Օղեսայի վրա		9	40	ԱՆՌԿՈՎ ԿԱՍԵԱՆ ՄԱՆ- ԿԱՐԱՊՁԱԿԱՆ ԳՊՐՈՑ (Վէրայի վրա № 38)		Ռուսաստանից և Արտասահմանից փոստատացվում է Թիֆլիսում և ամեն օր: Բացում են տրակտինգ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փոփոխութիւնները ամեն օր: Նույն տրակտինգ չորեքշաբթի և կիրակի: Բեկիկիւնի տրակտինգ երեքշաբթի և շաբաթ:	Վերաբաւ Վիսիցեյի ներքին հ., Բաքուի աչքի հ., Ժուրաբի կաշու և վերնաւոր հ., Բաքուի չորեքշաբթի և շաբաթ:	Շաբաթ. Վիսիցեյի ներքին հ., Բաքուի աչքի հ., Ժուրաբի կաշու և վերնաւոր հ., Բաքուի չորեքշաբթի և շաբաթ:																																								
Վենայի կուրսը արծ. 121 դ.		100	—																																													
Դաբեթի քարաքիլ »		4	80																																													
Առևտրական բանկի ակցիան 200 մ. »		310	—																																													
Փոթի Թիֆլիսյան երկաթուղու ակցիան 125 մ.		—	—	ԴՆԱՆԳԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼԻԹԻՒՆԸ ԵՐԵԿՎԱՆ ԵՐԵԿ																																												